ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱՀՆԻՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Լ. Բաղդասարյան

Հաստատված է համայնքի ավագանու կողմից

Ահնիձոր 2012թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է քառամյա ծրագիրը

6. Համայնքի իրավիճակի գնահատում.
7. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները.
8. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.
9. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում.
10. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

ԻՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է , որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից , քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական , տնտեսական և մարդկային ռեսուրների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Լոռու մարզի (նախկին Թումանյանի շրջանի) Ահնիձոր գյուղը պատմական արձանագրություններում հիշատակվում է դեռևս 16- 17 դարերում : Այն ավելի հին է քան ենթադրվում է, որը վկայում են գյուղի շրջակայքում գտնվող խաչքարերը:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1520մ բարձրության վրա: Գյուղի կլիման ձմռանը մեղմացուրտ է , իսկ ամռանը շոգ : Հաճախակի են չորային երաշտի տարիները, որից շատ են տուժում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվող գյուղացիները: Գյուղը հարուստ է անտառներով , վայրի բերքատու ծառերով և բնական աղբյուրներով:

Ներկայիս Ահնիձորի նախնիները եղել են Հաղպատից՝ 170-180 տարի առաջ :

Գյուղի շրջակայքում կան 60-ից ավելի խաչքարեր:

1941-45 թ.թ. Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են 70 զինվորներ, որից 36-ը զոհվել են:

1976 թ. գյուղի կենտրոնում կառուցվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը:

Գյուղի նախկին շրջկենտրոնից՝ Ալավերդուց գտնվում է 51 կմ և մարզկենտրոնից՝ Վանաձորից 55 կմ հեռավորության վրա:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՈՒՆԸ

Գյուղում ապրում են 278 բնակիչներ, որոնցից տղամարդիկ՝ 137 կանայք՝ 141

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է .

1. երեխաներ	- 0-6 տ. – 26
2. դպրոցականներ	- 7-17 տ. – 57
3. [illegible]	- 18-62տ. – 94
4. թոշակառուներ	- 43
5. հաշմանդամներ	- 4
6. աշխատունակներ	- 257

Գյուղը ունի 76 ծուխ, որոնցից 13-ը ընդգրկված են Փարոս համակարգում, որից 5-ը՝ նպաստառու են :

Տ Ի Մ

Համայնքի ինքնակառավարումը իրականացնում է ավագանին՝ կազմված 5 անձից և գյուղապետը:

Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ՝ հետևյալ կառուցվածքով.

5. գյուղապետի տեղակալ 1 դրույք
6. աշխատակազմի ղեկավար (քարտուղար) 1 դրույք
7. առաջատար մասնագետ հաշվապահ 1 դրույք

Կ Ր Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Գյուղը ունի հիմնական դպրոց՝ 1 մասնաշենքով, որտեղ սովորում է 24 աշակերտ: Ներկայումս դպրոցի շենքը գտնվում է բարեկարգ վիճակում:

Մ Շ Ա Կ ՈՒ Յ Թ

Համայնքը չունի մշակույթի կենտրոն: ՈՒնի գրադարան, որը դեռ խորհրդային տարիներին քանդվեց կառավարության կողմից նորը կառուցելու նպատակով, բայց մինչ օրս գյուղը զրկված է մշակույթի կամ համայնքային կենտրոն ունենալուց:

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համայնքը ունի բուժկետ, ունենք բուժքույր, նշանակված 24.05.21 առողջապահական կենտրոն ՓԲԸ-ի կողմից, որը բնակչությանը սպասարկում է տնային պայմաններում:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 101 սեփական առանձնատուն: Կան կիսակառույց տներ, որոնք բնակչության սոցիալ - տնտեսական վատ վիճակի պատճառով չեն վերանորոգվում:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքի վարչական տարածքը 3392,9 հա, որից՝

վարելահող	94.5 հա	93.73
խոտհարք	412.5 հա	454.93
տնամերձ	27.0 հա	26.57
արոտավայր(քարքարոտ)	762.4 հա	2480.13
պատմամշակութային	3.0 հա	2.97
սեփականաշնորհված	272.39 հա	334.62
մեկ հողաբաժինը	3.8 հա	

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ազգաբնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, որի համար համեմատաբար բարենպաստ պայմաններ չկան:

Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ հողամասերում և կաթի վերամշակումը իրականացվում է տնային պայմաններում: Կաթնամթերքը վաճառվում է շուկայում:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Համայնքում առկա է 17 միավոր գյուղտեխնիկա (անվավոր) : Քաղաքի հետ կապը իրականացվում է ավտոբուսներով՝ 700 դրամ արժեքով և տաքսիների միջոցով:

ՃԱՆԱՊԱՐՀ

Համայնքը Ալավերդուն է միացված25 կմ երկարությամբ ասֆալտապատ և 2.5 կմ շրջանացված ասֆալտապատ

Համայնքը ունի գյուղամիջյան 2-2.25 կմ երկարությամբ ճանապարհներ, սակայն այն գտնվում է անմխիթար վիճակում:

Ջ ՈՒ Ր

Համայնքում 5 կամ 6 հոսքերում է: և այն չի ապահովում խմելու ջրի պահանջները: Համայնքը ունի նաև բնական աղբյուրներ, որից բնակչության մի մասը օգտվում է շուրջօրյա:

Գ Ա Զ

Համայնքը գազաֆիկացված չէ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարություն.

Բարեփոխումներ անցկացնելու նպատակով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենակիրթ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

6. զարգացնել անասնապահությունը համայնքում.
7. զարգացնել հողագործությունը և այգեգործությունը ձեռք բերելով համայնքի համար անհրաժեշտ տեխնիկան .
8. կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը , հանգիստը աշխատանքից ազատ ժամանակ.
9. վերանորոգել գյուղամիջյան ճանապարհները և սելավատար ձորակները.
10. գազաֆիկացնել համայնքը:

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:

ԾՐԱԳԻՐ 1

Գազաֆիկացում .

Ներածություն

Ահնիձոր համայնքը տարածաշրջանում միակ համայնքներից է, որ դեռևս խորհրդային տարիներից գազաֆիկացված չէ, այն դեպքում , երբ գազամուղը գտնվում է 1.5 կմ հեռավորության վրա: Գազաֆիկացված չլինելու պատճառով խիստ տուժել են համայնքի մերձակա անտառները:

Ծրագրի իրականացման նպատակներն են .

- ապահովել համայնքի բնակիչներին բնական գազով
- բարելավել բնակիչների կենցաղային պայմանները
- կանխել համայնքի մերձական անտառների ոչնչացումը:

Խնդիրները .

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցումը :

Ծրագրի համար անհրաժեշտ է 35 մլն դրամ, որի 10 տոկոսի ներդրումը համայնքը պատրաստ է կատարելու:

ԾՐԱԳԻՐ 2

Ներածություն.

Համայնքը չունի համայնքային կենտրոն, որը առաջնահերթ խնդիր է համայնքի համար:

Ծրագրի նպատակը .

ա. միանգամայն կլուծվի գյուղապետարանի հարցը, գրադարանի 2440 կտոր գիրքը գտնվում է դպրոցի շենքի 2 սենյակներում, որով հնարավոր չէ համայնքի գրքի տրամադրումն ու ընթերցումը: Միաժամանակ կլուծվի համայնքի բուժկետի հարցը:

բ. աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը:

գ. կենտրոնի դահլիճը տրամադրել հարսանյաց հանդեսներին, ավագանու նիստերի համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար:

դ. տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ.

ե. տրամադրել խաղասենյակներ շախմատի նարդու և այլ խաղերի համար.

ԽՆԴԻՐԸ՝

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: Ծրագրի համար անհրաժեշտ է 55 մլն դրամ, որի 10 տոկոս ներդրումը կամայնքը պատրաստ է կատարելու:

ԾՐԱԳՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- բնակչության ազատ ժամանակը ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնել .
- ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական ու հոգևոր զարգացման համար:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Համայնքի ղեկավարի աշխատակազմի
և ենթակառույցների կառուցվածքը



Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

1. Գյուղապետարանի շենք
2. Գրադարան
3. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ
4. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
5. Հուշարձան
6. [illegible]
7. [illegible]
8. [illegible]
9. [illegible]
10. Պատմական խաչքարեր
11. Գերեզմանատուն

Համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը.

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը :

Լոռու մարզի Ահնիձոր համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

Եկամուտի տեսակը	2004թ. փաստ	2005թ.	2003թ. փաստացի	2007թ. փաստացի	2008թ. փաստացի	2009 նախաս.
Եկամուտներ ընդամենը	9338.9	10417,5	11243,8	12155,2	11774,8	9924,5
Հարկային եկամուտներ	3303,7	4482,2	6858,8	6355,9	4933,2	2094,8
Հողի հարկ	2799,3	3987,8	6202,1	5558,0	4267,0	1732,2
Գույքահարկ	504,4	494,4	656,8	797,9	666,2	362,6
Տուրքեր	40,0	40,0	-	-	20,0	-
Պետական	-	-	-	-	-	-
Տեղական	40,0	40,0	-	-	20,0	-
Ոչ հարկ. եկամուտներ	4495,2	4395,3	2885,0	3740,0	4816,0	5824,0
դոտացիա	1500,0	1500,0	1500,0	2059,3	2005,6	2005,7